



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

US1712112

91.71

2-57



91.71-3

6-56

ԱՆԳՐԵՆԻ

57

# Մ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հոգեբանական Էսիեդ

[Redacted]

✓

0000  
2-42

Ս. ՊԵՏԵՐՅԱՆ

ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1906

Լ. ԱՆԳՐԷՆԻ.

17 JUL 2000

189 NOV 2010

891.71-3

572

39

այ.

# Ս Տ Ո Ւ Թ Ի Ի Ս

Հոգեբանական էտիզ

[Redacted]



343



Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ  
«ՊՈՒՇԿԻՆՆԵՆ ՏՊԱՐԱՆ»  
1906



ես զնամ այնտեղ. ես էլ զնացի և տեսայ, թէ  
ինչպէս զոգզերը ամբողջ զիշեր պարում էին:  
Ոչ ոք չէր մօտենում և խօսում հետս. բոլորի  
համար օտար՝ ես նստած էի նուազածուների  
մօտ — անկիւնում: Պղնձեայ մեծ փողի բերա-  
նըն ուղղված էր ուղղակի իմ ականջին և այն-  
տեղից մռնչում էր մի թազնված ձայն, իւրա-  
քանչիւր երկու ըոպէից ընդհատաբար և կոշա  
ձայնով ծիծաղելով — Հօ-հօ-հօ:

Երբեմն ինձ մօտենում էր սպիտակագոյն  
բուրալից մի ամպիկ: Դա՛ նա էր: Չ՛գիտեմ  
ինչպէս էր նա կարողանում փայփայել ինձ  
հասարակութեան համար աննկատելի կերպով.  
Նրա ուսիկը միայն մի վայրկեան հպվում էր  
իմ ուսին, միայն մի վայրկեան տեսնում էի  
նրա սպիտակ վիզը իր ճերմակ զգեստի ձեղ-  
բուածքում: Սակայն երբ աչքերս վեր էի բար-  
ձրացնում, տեսնում էի նրա սպիտակ պրօ-  
ֆիլը՝ աչնպիտի լուրջ և անկեղծ արտայայ-  
տութեամբ, որպիսին լինում է մոռացված  
մարդու գերեզմանի սուղի կանգնած մտայնոց  
հրեշտակի դէմքին: Տեսնում էի և նրա աչքե-  
րը, որոնք խոշոր էին, անչափ դէպի լոջոր, զե-  
ղեցիկ և հանդիստ: Բոլորված կապտագոյն  
շրջանակում սեին էր տալիս նրա բիբը, և ես  
որքան ձգնո՛ւմ էի թափանցել նրա խորքը,

այնքան նա սեանում և խորունկ ու անթա-  
փանց էր դառնում: Դուցէ ես երկար չէի նա-  
յում նրա վրայ, հետևաբար և սիրտս չէր կա-  
րողանում ոչ մի փոփոխութիւն կրել, սակայն  
ես երբէ՛ք այնքան խորապէս և սարսափով  
չէի ըմբռնել անսահմանութեան նշանակու-  
թիւնը, երբէ՛ք այդչափ զօրեղ կերպով չէի ըզ-  
դացել նրա ազդեցութիւնը: Լի սարսափով ու  
ցաւով, ես զգում էի, թէ ինչպէս իմ ամբողջ  
կեանքը բարալիկ ճառագայթով տեղափոխվում  
է նրա աչքերի մէջ, մինչև իսկ՝ իմ ինձ հա-  
մար օտարանալս, մինչև դատարկ ու անբար-  
բառ, զրեթէ անկենդան դառնալս: Այն ժա-  
մանակ նա հեռանում էր ինձանից, տանելով  
իմ կեանքը և կրկին սկսում էր պարել մի ինչ  
որ բարձրահասակ, գոռոզ, զեղեցիկ պարօնի  
հետ: Վերջինիս արտաքինի իւրաքանչիւր ման-  
րամասնութիւնը ես ուսումնասիրեցի. նրա ոտ-  
նամանների ձևը, բարձրացած ուսերի լայնու-  
թիւնը, գանգուրների համաչափ երերումը. իսկ  
ինքը իր անտարբեր, անուշադիր հայեացքով  
կարծես ինձ խրում էր պատի մէջ, և ես դառ-  
նում էի այդ պատի պէս տափակ և տեսո-  
գութեան համար աննկատելի:

Երբ մոմերը սկսան հանգչիլ, ես մօտեցայ  
նրան և ասացի.

— Ժամանակ է գնալու, ես ձեզ կուղեկցեմ:

Սակայն նա դարմայաւ:

— Բայց չէ՞ որ ես նրա հետ եմ գնալու, պատասխանեց նա, ցոյց տալով այն բարձրահասակ և դեղեցիկ պարոնին, որը մեզ վրայ էր էլ նայում:

Եւ տանելով մի դատարկ սենեակ, նա ինձ համբուրեց:

— Ի՞նչ ստո՞ւմ ես, ասացի ես մեղմածայն:

— Մենք այսօր կտեսնվենք, դու կրդաս, — պատասխանեց նա:

Բարձրաբերձ կտուրների վրայից երևում էր կանաչադոյն սառնամանիք առաւօտը, երբ ես կառքով վերադառնում էի տուն: Եւ այդ ամբողջ փողոցի վրայ մենք երկուսով էինք. ես և կառապանը: Նա նստած էր կորացած և երեսը թաղցրած, իսկ նրա յետևը նստած էի ես՝ նոյնպէս կորացած և երեսս մինչև ւաջերը թաղցրած: Կառապանը իր մտորմունքներն ունէր, ես էլ իմը. իսկ այնտեղ, հաստ պատերի մէջ քնած էին հազարաւոր մարդիկ, որոնք նոյնպէս ունէին իրանց երազներն ու մտքերը: Ես մտածում էի «նրա» մասին՝ որ նա ստում է: Ես մտածում էի և մահուան մասին, և ինձ թւում էր, թէ այդ աղչամուխչի մէջ թաղված պատերն արդէն տեսնում էին

իմ մահը և դրա համար էլ նրանք այդպէս սառն են և ուղիղ: Չ'զիտեմ՝ ի՞նչ էր մտածում էի և մահուան մասին, և ինձ թւում էր, թէ այդ աղչամուխչի մէջ թաղված պատերն արդէն տեսնում էին իմ մահը և դրա համար էլ նրանք այդպէս ուռն են և ուղիղ: Չ'զիտեմ՝ ի՞նչ էր մտածում կառապանը. չ'զիտեմ՝ ինչի՞ մասին էին երազում պատերի յետևում պատասպարվածները: Սակայն չէ՞ որ նրանք էլ չ'զիտէին, թէ ի՞նչ եմ երազում և մտածում ես:

Եւ այդպէս մենք դնում էինք երկար և ուղիղ փողոցներով, իսկ առաւօտը բարձրանում էր կտուրների յետևից, և մեր շուրջն ամենուրեք սպիտակած և անշարժացած էր: Բուրայից և պաղ ամպը մօտենում էր ինձ, և ուղղակի իմ ակունջին դարձեալ մի թաղնված ձայն ծիծաղում էր — հօ՛-հօ՛-հօ՛:

II.

Նա ստեց: Նա չեկաւ. դուր էի ես սպասում նրան: Պաղած զորշ կիսախաւարն իջնում էր մուկը երկնակամարից, և ես չիմացայ, թէ ե՞րբ վերջալոյսը տեղի աւեց երեկոյին, երեկոն — զիշերին. ինձ թւում էր, թէ այդ բոլորը զիշերուայ մի ամբողջութիւն էր: Միշտ նոյն՝ եր-

կար սպասողի միակերպ հաւասար քայլերով  
 ես անդադար չեա ու առաջ էի քայլում: Ես  
 չէի մօտենում ոչ այն բարձր տանը, որի մէջ  
 ապրում էր իմ սիրուհին, ոչ նրա ապակեայ  
 դռանը, որ դեղնի էր տալիս երկաթեայ ծած-  
 կոցի տակ, այլ միշտ նոյն հաւասար քայլե-  
 րով անցուգարձ էի անում նրա հակառակ  
 կողմը: Գնալով դէպի առաջ՝ հայեացքս մե-  
 խում էի ապակեայ դռան վրայ, իսկ յետ դառ-  
 նալիս յաճախ կանգ էի առնում և գլուխս յետ  
 դարձնում. այն ժամանակ ձիւնի սուր ասեղ-  
 ները ծակծկոտում էին իմ երեսը: Այնքան  
 երկար էին այդ սառը և սուր ասեղները, որ  
 թափանցում էին մինչև սրտիս խորքը և ծա-  
 կոտում անձկութեան և զայրույթի զգացում-  
 ներով: Պայծառ հիւսիսից դէպի մութ հա-  
 րաւն ազատօրէն սլանում էր ցրտաշունչ օդը.  
 սուլոցները բերանին խաղում էր սառած կը-  
 տուրների վրայ և պոկվելով այնտեղից՝ ձիւ-  
 նի սուր փաթիլներով հարուածում իմ երեսը,  
 ապա թեթև կերպով ծեծում դատարկ լապ-  
 տերների ապակիները, ուր դեղնագոյն մենա-  
 ւոր կրակը երերվում էր դողոց առաջացնող  
 ցրտից: Ես խղճում էի այդ մենավոր կրակը,  
 որ ապրում է միայն գիշերները. ինձ թւում  
 էր, թէ կեանքն ահա՛ կվերջանայ հէնց այդ

փողոցի վրայ, որտեղից ես ևս կհեռանամ և  
 այն ժամանակ ձիւնի փաթիլները միայն պի-  
 տի սլանան դատարկ տարածութեան մէջ, իսկ  
 դեղին կրակը շարունակ պիտի դողգողայ և կո-  
 րանայ միայնակութեան ու սառնութեան մէջ:  
 Ես սպասում էի նրան, բայց նա չէր գա-  
 լիս: Եւ ինձ թւում էր, թէ այդ մենավոր  
 կրակն ու ես՝ նման ենք իրար. սակայն իմ  
 լապտերը դատարկ չէր, որովհետև այն տա-  
 րածութեան մէջ, ուր ես շրջում էի՝ երբեմն  
 մարդիկ էին երևում: Նրանք աննկատելի կեր-  
 պով յանկարծ էին լուս ընկնում իմ յետևում,  
 որպէս մեծ և մթին ուրուականներ, առաջ  
 էին շարժվում իմ մօտով և պարզվելով հետդ-  
 հետէ՝ անմիջապէս անյայտանում սպիտակ շի-  
 նութեան սուր անկիւնում: Կրկին և կրկին  
 դուրս էին գալիս նրանք այդ անկիւնից, հա-  
 ւասարվում էին ինձ և դանդաղ կերպով ան-  
 յայտանում մոխրագոյն տարածութեան մէջ,  
 որտեղ լցւած էր անաղմուկ թափվող ձիւնը:  
 Այդ շորափաթաթ տձև ու անխօս արարած-  
 ները չափազանց նման էին իրար և ինձ, թը-  
 ւում էր, թէ տասնեակներով մարդիկ ինձ պէս  
 յետ ու առաջ են շարժվում, սպասում, ցրնց-  
 վում ու լսում և մտածում մի ինչ որ խոր-  
 հրդաւոր օխուր բանի մասին:

Ես սպասում էի նրան, սակայն նա չէր գալիս: Չ'գիտեմ ինչու, ես ո՛չ բղաւում էի և ոչ էլ լաց լինում ինձ տանջող կոկծից. չ'գիտեմ ինչու, ես ծիծաղում և ուրախանում էի և մատներս այնպէս ուժգին սեղմում, որ դրանք կարծես մի-մի եղջիւրներ լինէին, կարծես ես բռնած լինէի այն փոքրիկ թունաւոր օձուկից, որը անընդհատ Ֆշշում է «ստու թիւն» բառը: Նա գայարվում էր իմ ձեռքերում և խայթում իմ սիրտը, և այդ թունաւոր խայթից գլուխս պտտւում էր: Ուրեմն ամեն ինչ կեղծի՞ր էր: Անյայտացան ներկայի և ապագայի, ներկայի և անցեալի միջև եղած սահմանները: Անյայտացաւ և այն ժամանակաշրջանի սահմանը, երբ ես տակաւին չէի ապրում, և այն՝ երբ ես սկսել էի ապրել. ինձ թւում էր, թէ ես՝ միշտ ապրել եմ, կամ՝ չեմ ապրել երբէք: Եւ միշտ, — քանի տակաւին չէի ապրում և երբ սկսել էի ապրել, — ինձ վրայ թաղաւորում էր «նա»: Տարօրինակ էր թւում այն համոզմունքը, որ նա ունենալով անուն և մարմին՝ նրա հութեան մէջ զօյուլթիւն ունի սկզբնաւորութիւն ու վախճան: Նա անուն չէ ունեցել: Նա միշտ այն է եղել, որչ՝ ստում է, միշտ այն, որը ստիպում է սպասել անվերջ և սակայն երբէք չէ գալիս: Եւ ես, չ'գիտեմ ինչու, ծիծաղում

էի, իսկ սրածայր ասեղները ցցվում էին սրբախ մէջ, և իմ ականջին աներևոյթ մէկը ուղղակի ծիծաղում էր — հօ-հօ-հօ:

Բանալով աչքերս ես տեսնում էի բարձր տան լուսաւորված պատուհանները, որոնք իրանց կապոյտ ու կարմիր լեզուներով մեղմածայն ասում էին ինձ.

— Ի՞նչ խաբված ես նրանից. այս ըուպէիս, մինչ դու այդտեղ թափառում ես, սպասում, տանջվում, նա ամբողջապէս գեղեցկացած, պայծառադէմ, ամբողջապէս կեղծաւորված՝ գտնւում է այս տան մէջ և լսում այն ամենը, ինչ որ շշնջում է նրան քեզ արհամարհող այն բարձրահասակ և գեղեցիկ մարդը: Եթէ դու ներս խուժէիր այստեղ և սպանէիր այդ կնոջը՝ դու սպանած կլինէիր նաև ստութիւնը:

Ես ամուր սեղմում էի ձեռքս, որի մէջ բռնած ունէի դանակ, և հեզնանքով պատասխանում.

— Այո՛, ես նրան կսպանեմ:

Սակայն տխրադէմ նայում էին ինձ պատուհանները և տխուր կերպով աւելացնում:

— Բայց դու երբէք չես սպանիլ նրան, երբէք, որովհետեւ քո ձեռքի դաշոյնն էլ նոյնպիսի մի ստութիւն է, որպիսիք են նրա համբոյրները:

Վաղուց արդէն անյայտացել էին սպասող-  
 ների անխօս ստուերները, այդ ցուրտ տարա-  
 ծութեան մէջ մնացի մենակ ես և սառնու-  
 թիւնից ու յուսահատութիւնից դողացող հրե-  
 դէն մենաւոր լեզուակները: Հնչեց մօտակայ-  
 քում գտնվող եկեղեցու ժամացոյցի զանգակը:  
 Նրա մետաղեայ թախծալից հնչիւնը դողդողում  
 ու լալիս էր՝ դուրս նետվելով տարածութեան  
 մէջ և անյայտանալով աննպատակ պտոյտներ  
 դործող ծիւնի քանդուածներում: Սկսեցի հա-  
 մարել հարուածները և — ծիծաղեցի. ժամա-  
 ցոյցը խփեց տասնևհինգ: Չանգակատունը հին  
 էր, ժամացոյցը նոյնպէս հին, թէև ժամանա-  
 կըն ուղիղ էր ցոյց տալիս, բայց հարուածնե-  
 րը լինում էին անհաշիւ, երբեմն այնքան շատ,  
 որ այւր զանգահարը հարկադրված էր լինում  
 բարձրանալ և ձեռներով դադարեցնել ցնցողա-  
 բար զարկվող մուրձիկը: Ո՛ւմ համար էին սր-  
 տում այդ դողդոջիւն, ծերունական տխուր՝  
 սառնամանիքի խաւարով պաշարված ու խեղդ-  
 ված՝ հնչիւնները: Սչնպէս ցաւալի և անհե-  
 թեթ էր այդ անպէտք ստութիւնը:

Եւ այդ կեղծ հարուածի վերջին հնչիւնի  
 հետ բացվեց ապակեայ դուռը և աստիճաննե-  
 րով ցած իջաւ մի բարձրահասակ մարդ: Թէ-  
 պէտ տեսնում էի միայն նրա մէջքը, այնուա-

մենայնիւ կարողացայ ճանաչել նրան. դեռ ե-  
 րեկ էի տեսել այդ հպարտ և արհամարհող  
 կերպարանքը: Նրա քայլուածքն էլ ծանօթ  
 էր ինձ, որը այժմ թեթև և առաւել հաստա-  
 տուն էր, քան երեկ: Սչդպէս ես էլ քանիցս  
 հեռացել եմ այդ տնից: Սչդպէս են քայլում  
 առհասարակ այն մարդիկ, որոնք նոր միայն  
 համբուրել են կանացի սրտասած շրթունքներ:

III.

Ես սպասում էի, ես պահանջում էի ստամ-  
 ներս կրծոացնելով՝

— Պարզի՛ր ինձ ճշմարտութիւնը:

Եւ սառը ծիւնանման դէմքով, զարմանքից  
 բարձրացրած յօնքերով, որոնց ներքև նոյնպէս  
 անզգայ ու հանելուկային արտայայտութեամբ  
 մթազնել էր նրա անթափանց բիբը, նա հար-  
 ցնում էր ինձ.

— Բայց մի՞թէ ես խաբում եմ քեզ:

Նա համոզված էր, որ ես անկարող կլինեմ  
 հաստատել իր ստախօսութիւնը, որ զաղտնի-  
 քը իմանալու համար իմ գործ դրած բոլոր  
 նախապատրաստական ծանր ու ամրակուռ  
 հնարագիտութիւնները կարող են իսպառ փը-

չրվել նրա մի ամենաչնչին բառից անգամ, նրա մի սուտ բառից: Եւ իմ սպասածի համեմատ՝ այդ բառը դուրս թռաւ նրա բերանից, — բառ, որը փայլում էր ճշմարտութեան մակերևոյթի արտաքին զոյներով, սակայն խաւարած՝ իր խորութեան մէջ:

— Ես սիրում եմ քեզ. մի՞թէ ես ամբողջապէս քոնր չեմ:

Մենք քաղաքից բաւական հեռու էինք. մութ պատուհանից երևում էր ձիւնապատ դաշտավայրը: Նրա վրայ ևս իշխում էր խաւարը, շրջապատը նոյնպէս խաւարած էր — թանձր, անշարժ և խաղաղ խաւարով. սակայն այդ խաւարի մէջ փայլում էր նրա նուիրական լոյսը, ինչպէս աղջամուխջի մէջ ննչեցեալի դէմքը:

Մենաւոր ճրագն էր միայն լուսաւորում տաքացրած սենեակը և կարմրագոյն կրակի վրայ նկատվում էր մեռեալ դաշտավայրի դժգոյն անդրադարձումը:

— Որքան էլ դառն լինի ճշմարտութիւնը, այնուամենայնիւ ես կուզեմ ճանաչել այն: Գուցէ ճանաչելով ճշմարտութիւնը ես նոյն իսկ մեռնեմ, սակայն լաւ է մահը, քան ճշմարտութիւնը չիմանալը: Բո համբոյրների և զրկախառնութիւնների մէջ ես զգում եմ միայն

ստույթիւն: Բո աչքերում պարզ տեսնվում է դա: Սաս ինձ ճշմարտութիւնը և ես ընդմիշտ կհեռանամ քեզանից, — ասում էի ես:

Սակայն նա լուռ էր, և նրա միանգամայն ռնտարբեր ու սառնասիրտ հայեացքը թափանցում էր իմ ներսը, տակն ու վրայ էր անում սիրտս և դեռ տարօրինակ հեռաքրքրութեամբ գննում այն:

Եւ ես ուժգին դռացի.

— Պատասխանի՛ր, թէ չէ կսպանեմ քեզ:

— Սպանի՛ր, — պատասխանեց նա անվրդով, — երբեմն այնքան տաղտկալի է կեանքը. բայց արդեօք սպառնալիքներով կարելի՞ է իմանալ ճշմարտութիւնը:

Եւ այդ թոպէին ես ծնկաչոք ընկայ նրա առջև: Սեղմելով նրա ձեռքը և լաց լինելով աղերսում էի նրան, որ խղճայ ինձ և ասէ ճշմարիտը:

— Խեղճ, — մրմնջաց նա ձեռքը դնելով մաղերիս վրայ, — խեղճ:

— Խղճա՛ ինձ, — աղերսում էի ես, — այնքան կարօտ եմ ճշմարտութեան:

Ես նայում էի նրա մաքուր ճակատին և մտածում. ճշմարտութիւնն անշուշտ այնտեղ է թաղնված, այդ բարակ պատուարի տակ: Եւ իմ մէջ կատաղի ցանկութիւն ծնեց պա-

տառել նրա գանգը՝ ճշմարտութիւնը այնտեղ տեսնելու համար: Ահա՛ այնտեղ, այն ճերմակ կրծքի տակ բաբախում է սիրտը. դարձեալ կատաղի ցանկութիւնս դրդում էր ինձ եղունգներով պատառել այդ կուրծքը և դռնէ մի անգամ տեսնել մարդկային մերկացրած սիրտ:

Եւ անշարժ կերպով դեղնի էր տալիս հատվող մոմի սրածայր բոցը և հետզհետէ մարելով պատերը բաժանում էր իրարից. այնպիսի լժախիժ, այնպիսի մենակութիւն էր շուրջս, այնպիսի անձկութիւն:

— Խեղճ, — մըմնջում էր նա, — խեղճ:

Ջրածգարար ցնցվելով դեղին լոյսը ցած ընկաւ և անմիջապէս սկսեց կապտել, ապա բոլորովին մարեց. և խաւարը պաշարեց մեզ: Ես այլևս չէի տեսնում ոչ նրա աչքերը, ոչ դէմքը. նրա բազուկները դրկել էին իմ դուխր, և ես այլ ևս չէի զգում ստութեան ներկայութիւնը: Փակելով աչքերս ես նոյն իսկ չէի էլ մտածում, չէի ապրում, այլ միայն իմ մէջ էի սուզում նրա ձեռների շփման ազդեցութիւնը, և ինձ թւում էր, թէ դա՛ անկեղծ ու ճշմարիտ է: Խաւարի մէջ մեղմ հրնջում էր նրա երկիւղած և տարօրինակ մըմունքը.

— Գրկիր ինձ, ես սարսափում եմ:

Եւ կրկին լռութիւն, կրկին մեղմ, լի սարսափով մըմունք:

— Ի՞նչ կամենում ես իմանալ անկեղծութիւնը. մի՞թէ ես ծանաչում եմ այն: Կարծում ես, ես չե՞մ ուզում իմանալ ճշմարտութիւնը: Պաշտպանիր ինձ. օ, որքան սարսափելի է:

Ես բաց արի աչքերս: Իժգունացած աղչամուխը սենեակի բարձր պատուհաններից սարսափով յեռ էր նահանջում և պաշտպանվում պատերի անկիւններում, իսկ պատուհանից դէպի ներս լուռ նայում էր մի ինչ-որ մեծ և մեռելային սպիտակագոյն բան: Թւում էր, թէ մէկի մեռած աչքերը մեզ են որոնում և իրենց սառցային հայեացքն ամբողջապէս մեզ վրայ անդրադարձնում:

Իողալով մենք հպվում էինք միմիանց, և նա շշնջում էր.

— Օ, որքան սարսափելի է:

IV.

Ես սպանեցի նրան: Ես սպանեցի նրան. և երբ նրա թորշոմած ու տափակ դիակը ընկած էր այն պատուհանի մօտ, որից դուրս

1001  
343



սպիտակին էր տալիս մեռելագոյն դաշտափայ-  
 րը, — ես ոտներովս կանգնեցի նրա դիակի  
 վրայ և ծիծաղեցի: Դա խելագարի ծիծաղ  
 չէր, օ, ո՛չ: Ես ծիծաղում էի, որովհետև կրթ-  
 քունս շնչառութիւնը հաւասար էր ու թե-  
 թև. նրա պահարանում տիրում էր ցնծու-  
 թիւն, անդորրութիւն և դատարկութիւն, ո-  
 ռովհետև սրտիցս ցած ընկաւ այն ցեցը, որը  
 կրծում էր նրան: Խոնարհելով գլուխս, նայեցի  
 նրա մեռած աչքերին: Խօշոր, լոյսից անչափ,  
 նրանք բաց էին մնացել և նմանում էին մո-  
 մեղէն խաղատիկիներին աչքերի — նոյնպէս կը-  
 լոր և մռայլ, ինչպէս ազակիով ժածկվածք:  
 Ես կարողանում էի մատնելովս շօշափել նը-  
 րանց, ծածկել և կրկին բաց անել. դա ինձ  
 չէր սարսափեցնում, որովհետև այդ բերի ան-  
 թափանց սևութեան մէջ այլ ևս կենդանի չէր  
 թէ՛ ստութիւնը և թէ՛ կասկածների այն դեր,  
 որ այնքան երկար ժամանակ ազահուլթեամբ  
 ծծում էր իմ արիւնը:

Երբ ինձ ձերբակալեցին — ես ծիծաղում  
 էի, և դա վայրենի ու սարսափելի էր թւում  
 ինձ ձերբակալողներին: Ոմանք արհամարհան-  
 քով երեսները շուռ էին տալիս ինձանից և  
 ծի կողմ հեռանում. ոմանք հաստատուն և  
 սպառնալից քայլերով, դատապարտութեան

վճիռը բերաններին չարձակվում վրաս. սակայն  
 երբ նրանց հայեացքներին հանդիպում էր իմ  
 պայծառ և ուրախ հայեացքը՝ նրանց դէմքե-  
 րը դունատվում էին, իսկ ոսկերը գետնին մե-  
 խվում:

— Խելագար, — ասում էին նրանք, և ինձ  
 թւում էր, թէ այդ բառը նրանց մխիթարում  
 է, որովհետև օգնում է հանելուկի լուծմանը.  
 այն է՝ որպէս սիրող — ես կարող էի սպանել  
 իմ սիրուհուն և ծիծաղել: Միայն մէկը պրան-  
 ցից՝ կարմիր աչտերով մի հաստ պարոն, այլ  
 կերպ անուանեց ինձ. դա կատարեալ հարուած  
 էր ինձ համար. իմ աչքերը չանկարծ մթնե-  
 ցին:

— Խեղճ մարդ, — ասում էր նա ցաւակ-  
 ցելով, առանց չարամտութեան, որովհետև նա  
 հաստ էր և ուրախապէս: — Խեղճ:

— Հարկաւոր չէ՞ ինձ այդպէս անուանել,  
 Հարկաւոր չէ՞ — բղաւցի ես:

Չ՛դիտեմ ինչու համար չարձակվեցի ես նրա  
 վրայ: Իհարկէ, ցանկութիւն չունէի ո՛չ սպա-  
 նել, ո՛չ էլ դիպել նրան. սակայն այդ բոլոր  
 վախկոտները, որոնք խելագար և չարագոծ է-  
 ին համարում ինձ՝ վախեցյալ աւելի սաստիկ  
 և այնպէս բղաւցին, որ ինձ դարձեալ ծիծաղ  
 պատճառեց:

Երբ ինձ դուրս էին բերում սենեակից, որտեղ ընկած էր դիտկը, ես բարձր և սպառնալից ծայնով կրկնում էի, նայելով այն ուրախաբեմ և հաստ մարդուն.

— Ես երշանիկ եմ, ես երշանիկ եմ: Եւ դա ճշմարիտ էր:

V.

Մանկութեանս օրերին դադանանոցում տեսել էի մի չովազ, որը իմ երեւակայութիւնն ուղղակի ապշեցրել էր և երկար ժամանակ ամբողջ միտքս պաշտրել: Նա նման չէր միւս գազաններին, որոնք անիմաստ արտայայտութեամբ նիրհում էին կամ շարանենդութեամբ նայում այցելուներին: Մի անկիւնից դէպի միւսը, մատեմատիքական ճշտութեամբ միշտ միևնոյն դժով նա չետ ու առաջ էր անում, իւրաքանչիւր անգամ միևնոյն կէտում շուռ գալով, իւրաքանչիւր անգամ իր օսկէպոյտ կողքը վանդակի պողպատեայ միևնոյն ցցին խփելով: Նրա դիշատիչ, սրածայր գլուխը կախ էր ընկած, հայեացքն ուղիղ էր — ոչ մի անդամ ուրիշ կողմ չէր դարձնում: Նրա վանդակի մօտ ամբողջ օրերով խոնված էր լինում

ամբոխը, խօսում էր և աղմկում, սակայն գազանը դարձեալ նոյն ձևով էր շարժվում և երբէք նրա հայեացքը չէր անդադառնում յանասորյների վրայ: Եւ քչերի դէմքն էր ժրպտում. մեծամասնութիւնը լուրջ, նոյն իսկ մրուալլ հայեացքներով դիտում էր այդ կենդանու ծանր և անլուծելի խոհերի մէջ խորասուզված կերպարանքը և հառաչելով հեռանում նրանից: Հեռանալիս կրկին նայում էին նրան տարակուսված և հետաքրքրվող այքերով ու դարձեալ հառաչում. կարծես մի ինչ որ համանման զիծ կար ազատ ապրող մարդկանց և այդ դերի ընկած դադանի ճակատազրի մէջ: Եւ վերջ ի վերջոյ, երբ ես արդէն հասունացել էի և ինձ հետ խօսել էին մարդիկն ու գրքերը յաւիտենականութեան մասին՝ ես անմիջապէս չիշեցի այն չովազը, և ինձ թւում էր, թէ արդէն ճանաչել եմ յաւիտենականութիւնըն էլ, նրա տառապանքներն էլ:

Ս.յգ տեսակ չովազ էի դարձել և ես՝ իմ քարեայ վանդակի մէջ: Ես ման էի դալիս և մտածում: Ես քայլում էի վանդակիս մի անկիւնից դէպի միւսը և այդ կարծ դժով էլ զրնում էին իմ մաքերը. այնպէս ծանր էին նրանք, որ կարծես գլխիս փոխարէն մի ամբողջ աշխարհ տանելիս լինէի ուսերիս վրայ: Մի-

այն մի բառից էր բաղկացած այդ ծանրութիւնը, բայց ճորտի մեծ, ճորտի տանջալից, ճորտի չարագուշակ բառից:

Ստուծիւն — ահա ինչպէս էր արտասանվում այդ բառը:

Ահա նա կրկին Փշալով դուրս սողաց բոլոր անկիւններից և սկսեց զայարվել իմ հոգու շուրջը. բայց սա այլևս այն փոքրիկ օձուկը չէր, այլ երկարացած, փայլուն ու կատաղի օձի էր փոխված: Ե՛լ խայթում էր, և՛ խեղդում ինձ իր երկաթեայ օղակներով, և երբ ցաւից սկսում էի բղաւել, իմ բացված բերանից դուրս էր թռչում այնպիսի մի զզւելի, վշապնոց օձի հնչիւն, որ կարծես իմ ամբողջ կուրծքը լցված լինէր թունաւօր սողուններիով:

Ստուծիւն:

Ես քայլում էի և մտածում. և մոխրագոյն հարթ ասֆալտը՝ աչքերիս առջև՝ փոխվում էր մի մոխրագունփող թափանցիկ անդունդի: Գրեթէ հպումը ոտներիս՝ ես այլ ևս չէի զգում. ինձ թւում էր, թէ ես՝ կանգնած անհուն բարձրութեան վրայ՝ իշխում եմ խաւարի և մշուշի վրայ: Երբ իմ կուրծքը արձակում էր վշիվող հեծկտանքներ, այնտեղ ներքևից — այդ հեռոցեակ պարզվող, սակայն անթափան-

ցիկ սաւանի տակից դանդաղօրէն վերասլանում էր նրա արձագանքը, և այնպէս խուռ ու ծանր, որ կարծես անցնելիս լինէր տասնեակ դարերի շղարշների միջից. սակայն իւրաքանչիւր վայրկեան մշուշի իւրաքանչիւր մասնիկում նրա ոչժր թուլանում, նուազում էր: Ես հասկանում էի, որ այնտեղ ներքևում նա սուլում է որպէս փոթորիկ, որը ծառեր է պոկոտում. իմ ականջին սակայն նա հասնում էր որպէս մի չարագուշակ հնչիւն:

Ստուծիւն:

Այդ անիծեալ շուռն ինձ ուղղակի կատաղութեան էր հասցնում. ես օտներովս քարերըն էի հարուածում և գոռում.

— Չկայ այլևս ստուծիւնը, ես սպանեցի այն:

Եւ դիտմամբ շուռ էի գալիս ուրիշ կողմ, որովհետեւ գիտէի նրա պատասխանելուն: Եւ նա զանդաղօրէն պատասխանում էր անյատակ անդունդի խորքերից.

Ստուծիւն:

Բանը նրանումն է, ինչպէս տեսնում էք, որ ես չարաչար սխալվել եմ: Կնօջր ես սպանեցի, իսկ ստուծիւնը անմահացրի: Մի՛ սպանէք կրկէք կնօջր, մինչև աղերսանքներով, սպառնա-

լիքներով և կրակով նրա կրծքից դուրս չբխէր ճշմարտութիւնը:

Այսպէս էի մտածում ես և շարունակ շեղ դժով քայլում մի անկիւնից դէպի միւսը:

## VI.

Մռայլ ու սարսափելի է այնտեղ, ուր նա տարաւ ճշմարտութիւնն ու ստութիւնը. ես ևս այնտեղ եմ դնալու: Սատանայի գահի մօտ նոյն իսկ կզտնեմ նրան և ծնկաչօք կընկնեմ նրա առջև, լաց կըլլինեմ և կասեմ.

— Պարզի՛ր ինձ ճշմարտութիւնը:

Բայց, Աստուած, չէ՞ որ դա էլ ստութիւն է: Այնտեղ խաւար է, այնտեղ դարերի և յաւիտենականութեան դատարկութիւն, նա այնտեղ չէ, նա ո՛չ մի տեղ չէ: Բայց ստութիւնը մնաց. նա՛ անմահ է: Ես զգում եմ նրան օդի իւրաքանչիւր մասնիկում, և երբ շնչում եմ՝ իր վշիշոցներով նա մտնում է իմ կուրծքը և պատառում է այն, պատառո՞ւմ:

Օ՛, որպիսի անմտութիւն է մարդ լինել և ճշմարտութիւն որոնել: Որպիսի տանջանք:

— Փրկեցէք ինձ, փրկեցէք:

Խարկով 1905 թ.

713 1922

ВНИМАНИЕ! Машинно  
УСТАНОВЛЕНА

*Նոր թարգմանչի ուսերէն*

Новый Годъ Гайдука, Умирающіе дня-  
ются вамъ и Мрачные дни *մի քանիս-  
րով* . . . . . 25 կ.

*Դիմել ներքևի հասցէով:*

ԳԻՆԸ 10 ԿՈՊԵԿ

*Գրքերի պահեստը գտնուում է՝*

Харьковъ, Чернышевская, № 5.  
Леону Григорянцу.

ՀՀ Ազգային գրադարան



NL0310527

9901